ՆԵԵՄԻԱՆ, ՈՎ ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ ՈՒՆԻ ԱՍՏԾՈՒ ՀԱՄԱՐ

Յոթերորդ հաղորդում

Նեեմիան՝ նմուշը նրա, ով տնօրինական արժեք ունի Աստծու համար

Գրվածքների ընթերցում. Հյտ 12:1-14, Նեմ 1:1-11, 2:9-20, 4:4-5, 9, 5:10, 14-19, 8:1-10, 13:14, 29-31

I. Աստված ուզում է այս դարաշրջանն ավարտել ու թագավորության դարաշրջանը բերել. սա իրագործելու համար Աստված պետք է Իր տնօրինական գործիքն ունենա.

Ա. Մենք բոլորս պետք է ապավինենք Տիրոջն ու աղոթենք, որ Աստծու համար տնօրինական արժեք ունենանք. մենք պետք է հարցնենք մեզ, թե ինչ ենք անում, որպեսզի ավարտին հասցնենք այս տնօրինությունն ու բերենք հաջորդ դարաշրջանը՝ թագավորության դարաշրջանը. սա հատուկ ժամանակ է, ուստի հատուկ հավատացյալների կարիք կա, ովքեր կիրագործեն հատուկ աշխատանք:

Բ. Նրանք, ովքեր կարողանում են միայն ասել՝ գնացեք, բայց ոչ՝ եկեք, օգուտ չեն բերի, այսինքն՝ Աստծու համար տնօրինական արժեք չեն ունենա՝ հմմտ Եբր 10:22.

1. Եբրայեցիներին ուղղված թղթի հեղինակը հավատացյալներին ոչ թե գնալ էր պատվիրում, այլ մոտենալ. սա նշանակում է, որ հեղինակը որոշակի վայրում էր և ուզում էր, որ ընթերցողները մոտենան այն նույն վայրին, որտեղ ինքն էր:
2. Մենք պետք է երեք բանի մոտենանք՝ Սրբությունների Սրբությանը, շնորհքի գահին և Իրեն՝ Աստծուն. մի՛ նահանջեք, մոտեցե՛ք՝ խ. 22, 4:16, 7:25, 11:6:
3. Աստված շնորհքի գահին է, իսկ շնորհքի գահը Սրբությունների Սրբությունում է. Եբրայեցիներին ուղղված թուղթը գրելու ժամանակ հեղինակն այնտեղ էր՝ Սրբությունների Սրբությունում՝ եբրայեցի հավատացյալներին կոչ անելով, որ մոտենան:

Գ. Արու զավակի հափշտակությունը, Սատանայի՝ երկիր ցած գցվելը և երկնքում ազդարարելը, որ թագավորությունը եկավ, նշանակում են, որ Աստծու կողմից արու զավակին ձեռք բերելը մեծագույն տնօրինական շարժում է, որովհետև այն ավարտին է հասցնում եկեղեցու դարաշրջանը և բերում է թագավորության դարաշրջանը՝ Հյտ 12:5, 9-10, 11:15.

Դ. Աստծու գահի մոտ արու զավակի հափշտակությունը տեղի կունենա մինչև հազար երկու հարյուր վաթսուն օրը, այսինքն՝ մեծ նեղության երեքուկես տարիների ժամանակահատվածը (քառասուներկու ամիս)՝ 12:1-14, 13:5, 11:2:

Ե. Մենք ապրում ենք ամենաարտոնյալ ժամանակաշրջանում, երբ կարող ենք Աստծու համար ամենաշատ բաներն անել. Աստված՝ որպես լույս, մեզ ցույց կտա ճանապարհը, իսկ ներբնակվող Քրիստոսը՝ որպես մեր ուժն ու զորությունը, մեզ հնարավորություն կտա այդ ճանապարհով

ընթանալու. հիմա օգտակար լինելու համար մեծ գին պետք է վճարվի՝ 3:18:

II. Քանի որ եկեղեցին չի հասել Աստծու մտահղացման իրագործմանը, Աստված ընտրելու է մի խումբ հաղթողների, ովքեր կհասնեն Նրա մտահղացման իրագործմանը և կկատարեն Նրա պահանջը. սա արու զավակի սկզբունքն է՝ 12:1-2, 5, 10-11, 2:7, 11, 17, 26-28, 3:5, 12, 20-21.

Ա. Տիեզերական պայծառ կինը ներկայացնում է Աստծու ամբողջ ժողովրդին, և ի վերջո կնոջ սերմը Ծնդ 3:15-ում ընդլայնվում է՝ ներառելով հաղթող հավատացյալներին՝ Աստծու ժողովրդի ավելի ուժեղ մասին, որոնք խորհրդապատկերվում են արու զավակով՝ Հյտ 12:1-2, 5, 10-11:

Բ. Հարուցանված Քրիստոսը՝ որպես կենդանարար Հոգին, կնոջ այլակերպված սերունդն է՝ կնոջ սերմը, ով բաշխվում է մեր մեջ, որպեսզի մեր մեջ ջախջախի օձի գլուխը և մեզ դարձնի կնոջ ընդհանրական սերմը՝ հաղթող արու զավակը, որը կիրագործի Աստծու դատաստանը հինավուրց օձի նկատմամբ և կդառնա Աստծու տնօրինական գործիքը, որը կփոխի դարաշրջանը և կբերի Աստծու թագավորության դրսևորումը՝ խ. 5:

Գ. Սղմ 2:8-9-ը, Հյտ 2:26-27-ը և Հյտ 12:5-ը ցույց են տալիս, որ Տեր Հիսուսը՝ որպես Աստծու Օծյալը, հաղթողները եկեղեցում և արու զավակը երկաթե գավազանով իշխելու են ազգերին, ինչն ապացուցում է, որ Տեր Հիսուսը, հաղթողներն ու արու զավակը մեկ են. Քրիստոսը՝ որպես առջևից գնացող Հաղթողը (3:21), արու զավակի Գլուխն է, կենտրոնը, իրականությունը, կյանքը և բնությունը, իսկ արու զավակը՝ որպես Տիրոջ հետևից գնացող հաղթողները, Տիրոջ Մարմինն է:

Դ. Խաչի վրա Տիրոջ մահվան միջոցով Սատանան՝ հինավուրց օձը, դատվեց, դուրս գցվեց (Հվի 12:31, 16:11). այդ դատաստանն ու դատավճիռը վերջնականապես իրագործելու, ի կատար են ածելու հաղթողները՝ արու զավակը, կնոջ ընդհանրական սերմը. պատերազմը, որը հաղթող հավատացյալները մղում են Սատանայի դեմ, իրականում նրա հանդեպ Տիրոջ դատավճիռն ի կատար ածելն է, որպեսզի նա ի վերջո դուրս գցվի երկնքից (Հյտ 12:7-9):

Ե. Արու զավակը կազմված է հաղթողներից, ովքեր կանգնում են եկեղեցու անունից, ստանձնում են այն դիրքը, որն ամբողջ եկեղեցին պետք է ստանձնի, և կատարում են աշխատանքը եկեղեցու անունից՝ 2:7բ, 11բ, 17բ, 26-28, 3:5, 12, 21, 12:5, 11.

1. Աստծու ամբողջ ժողովուրդը պետք է մաս ունենա Նրա հավիտենական մտահղացման մեջ, բայց ոչ բոլորն են ընդունում իրենց տրված պարտականությունը, ուստի Աստված նրանց թվից ընտրում է մի խմբի՝ կնոջ ծնած արու զավակին:
2. Աստվածաշնչում Աստծու մարդկանց միջավայրում առավել ուժեղները համարվում են ընդհանրական միավոր, որը մարտնչում է Աստծու համար և երկիր է բերում Աստծու թագավորությունը՝ Հյտ 12:5, 10-11:

3. Աստված օգտագործելու է արու զավակին, որպեսզի իրականացնի Իր տնտեսությունը և իրագործի Իր մտահղացումը՝ Ա Տմթ 1:4, Բ Տմթ 1:9, Եփս 1:9, 11, 3:11:
4. Աստծուն անհրաժեշտ է, որ արու զավակը պարտության մատնի Իր թշնամուն և բերի Իր թագավորությունը, որպեսզի Նրա հավիտենական մտահղացումը իրագործվի. Տիրոջ վերականգնումն այսօր Աստծու տնտեսության գործնականությունն է, իսկ Աստծու տնտեսությունը կարող է իրագործել միայն արու զավակը՝ Հյտ 12:10:

Զ. Արու զավակի հափշտակությունը իրադարձություն է, որի արդյունքում Սատանան այլևս տեղ չի ունենա երկնքում. մենք պետք է հափշտակվենք, որպեսզի բավարարենք Աստծու կարիքը՝ ի կատար ածելով Նրա դատաստանը Նրա թշնամու նկատմամբ՝ խխ. 5, 7-10:

Է. Նրանք, ովքեր կազմում են արու զավակը, հաղթում են բանսարկուին (ամբաստանողին, զրպարտչին), այսինքն՝ Սատանային՝ Աստծու հակառակորդին, Գառան արյան շնորհիվ, իրենց վկայության խոսքի շնորհիվ և ընդհուպ մինչև մահ շունչ-կյանքը չսիրելու շնորհիվ՝ խխ. 10-11:

Ը. Արու զավակի ամբողջ էությունը հագենում ու ներծծվում է Քրիստոսի տարրով, որովհետև նրանք ամեն օր ներամրապնդվում են իրենց ներքին մարդու մեջ, որպեսզի Քրիստոսն Իրեն ներկառուցի նրանց սրտերում, նրանք սնուցվում են Քրիստոսի անքննելի հարստությամբ, և նրանք հագնում են Քրիստոսին՝ որպես Աստծու ողջ սպառազինությանը՝ Եփս 3:16-18, 8, 6:10-11:

III. Երբ Իսրայելը յոթանասուն տարով գերության տարվեց, Աստված, միևնույն է, տնօրինական շարժում իրագործեց Նեեմիայի շնորհիվ, ով իսկական հաղթող էր. նա Աստծու համար տնօրինական նշանակություն ունեցող մարդու նմուշ է՝ Նեմ 1:1-11, 2:9-20, 4:4-5, 9, 5:10, 14-19, 8:1-10, 13:14, 29-31.

Ա. Նեեմիայի գրքի հանգուցային պահն այն է, որ Երուսաղեմ քաղաքի վերակառուցումը՝ իր պարսպով հանդերձ, թե՛ Աստծու ընտրյալների միջավայրում վերականգնման շարունակությունն էր Նրա վկայության համար որպես Աստծու տնտեսության իրագործումը, թե՛ քաղաքի ներսում Աստծու տան ապահովությունն ու պաշտպանությունն էր.

1. Սա նշանակում է, որ Աստծու տան՝ որպես երկրի վրա Նրա բնակատեղի ու կացարանի համար անհրաժեշտ է, որ հաստատվի Նրա թագավորությունը որպես ոլորտ, որը կպահպանի Նրա շահերը երկրի վրա Նրա կառավարման համար, որպեսզի Նա իրագործի Իր տնտեսությունը՝ հմմտ Հռմ 14:17:
2. Աստծու տան վերակառուցումը դեգրադացված եկեղեցու՝ Աստծու կողմից վերականգնման նախատիպն է, իսկ Երուսաղեմ քաղաքի պարսպի վերակառուցումը Աստծու կողմից Իր թագավորության վերականգնման նախատիպն է. Աստծու տան և Աստծու թագավորության կառուցումը սերտորեն կապված են՝ Մտթ 16:18-19:

Բ. Երբ Քրիստոսը՝ որպես մեր կյանքը, իրականություն և վայելք է դառնում մեզ համար, ձեռք ենք բերում եկեղեցին՝ որպես Աստծու տունը. եթե ավելի առաջ գնանք ու գիտակցենք Նրա գլխավորությունը, տունը կընդլայնվի և կդառնա քաղաք՝ Աստծու թագավորությունը՝ Եփս 1:10, 22-23, 4:15, Հյտ 22:1:

Գ. Նեեմիան ցույց է տալիս մեր՝ Տիրոջ վերականգնման մեջ այսօր պատշաճ հաստատակամություն ունենալու անհրաժեշտությունը.

1. Մովաբացիների և ամմոնացիների առաջնորդները չափազանց դժգոհ էին Նեեմիայի՝ Իսրայելի զավակների համար բարիք փնտրելուց. Ղովտի անմաքուր բազմացման այս հետնորդներն ատում ու արհամարհում էին Իսրայելի զավակներին՝ Նեմ 2:10, 19, հմմտ Եզկ 25:3, 8:
2. Ինչ վերաբերում է այս հակառակորդների ծաղրելուն, արհամարհելուն և նախատինքին, Նեեմիան շատ մաքուր ու հաստատակամ էր. նա երկչոտ չէր՝ Նեմ 2:17-20, 4:1-23, հմմտ Գրծ 4:29-31, Ա Թսղ 2:2, Բ Տմթ 1:7-8:
3. Հաստատակամները օգնություն են ստանում Աստծուց. ինչպես և Նեեմիան, Պողոս առաքյալը միավորված էր Աստծու հետ և այս միության մեջ գիտակցում էր Աստծու օժանդակությունը՝ Գրծ 26:21-22:
4. Նեեմիայի հաստատակամությունը՝ որպես առաքինություն նրա մարդկային վարվելակերպում, ցույց է տալիս, որ մեր բնական ընդունակությունը, կարողությունն ու առաքինությունը պետք է անցնեն Քրիստոսի խաչով և բերվեն հարության մեջ, Հոգու՝ որպես Եռամեկ Աստծու ավարտունության մեջ, որպեսզի օգտակար լինեն Աստծուն Նրա տնտեսության իրագործման հարցում:

Դ. Նեեմիան ապրում էր ոչ թե իր բնական մարդու մեջ, այլ հարության մեջ. նա հաստատակամ էր, բայց նրա հաստատակամությունը ուղեկցվում էր նրա այլ որակներով.

1. Աստծու հետ իր հարաբերությունում նա սիրում էր Աստծուն, ինչպես նաև սիրում էր Աստծու շահերը երկրի վրա, ներառյալ Սուրբ Երկիրը (որը խորհրդապատկերում է Քրիստոսին), սուրբ տաճարը (որը խորհրդապատկերում է եկեղեցին) և սուրբ քաղաքը (որը խորհրդապատկերում է Աստծու թագավորությունը)՝ Գ Թգ 8:48, հմմտ Բ Տմթ 3:1-5:
2. Որպես Աստծուն սիրող մարդ՝ Նեեմիան աղոթում էր Աստծուն, որպեսզի հաղորդակցության մեջ հպվի Նրան. պարսպի վերակառուցման համար Նեեմիան կանգնած էր Աստծու խոսքի վրա և աղոթում էր դրա համաձայն՝ Նեմ 1:1-11, 2:4, 4:4-5, 9:
3. Նեեմիան ապավինում էր Աստծուն և նույնիսկ մեկ էր դարձել Աստծու հետ. արդյունքում նա Աստծու ներկայացուցիչն էր դարձել՝ 5:19, հմմտ Բ Կրթ 5:20:

4. Ժողովրդի հետ իր հարաբերությունում Նեեմիան եսասեր չէր, չէր փնտրում սեփականը կամ սեփական շահը. նա միշտ պատրաստ էր իր ունեցածը զոհելու հանուն ժողովրդի և երկրի՝ Նեմ 5:10, 14-19:

Ե. Նեեմիան՝ որպես թագավորի դիրքում եղող իշխան, մաքուր սրտով մարդ էր, ով նվիրած էր Երուսաղեմի պարսպի վերակառուցմանը՝ Աստծու տնտեսության իրագործման համար. նա այն բանի նմուշն էր, թե ինչպիսին պետք է լինի ղեկավարը Աստծու մարդկանց միջավայրում՝ հմմտ Ա Տմթ 3:2-7, Ա Պտ 5:1-3.

1. Ի տարբերություն Իսրայելի և Հուդայի շատ թագավորների՝ Նեեմիան եսասեր չէր, չէր փնտրում իր սեփական շահերը և հագուրդ չէր տալիս տենչանքներին:
2. Որպես գլխավոր հրամանատար՝ Նեեմիան նրանց միջավայրում էր, ովքեր պատրաստ էին պատերազմելու թշնամու դեմ, և նա մասնակցում էր գիշերային դետին. նա այս պարտականությունները չէր թողնում ուրիշներին, այլ ինքն էր մասնակցում դրանց կատարմանը՝ Նեմ 4:9-23:
3. Նա և իր եղբայրները, Աստծու երկյուղից ելնելով, տասներկու տարի չկերան իշխանի համար նշանակված կերակուրը՝ 5:14-15:
4. Նեեմիան իրեն նվիրել էր քաղաքի պարսպի աշխատանքին՝ դրա դիմաց որևէ վարձատրություն չստանալով. սեփականը փնտրելու փոխարեն նա կերակրում էր մարդկանց՝ հանուն պարիսպը կառուցելու՝ խխ. 16-18:

Զ. Թեև Նեեմիան իշխան էր, նա բոլորովին փառասեր չէր. սա երևում է այն փաստից, որ ժողովրդին վերակազմելիս նա ընդունեց, որ իրեն անհրաժեշտ է Եզրասը՝ Աստծու ժողովրդին Աստծու խոսքով վերակազմելու համար՝ 8:1-10, Փլպ 2:3-4:

Է. Նեեմիան կատարյալ ղեկավար էր՝ լավագույն ղեկավարը մարդկային պատմության մեջ և այն բանի լավագույն օրինակը, թե երեցն ինչպիսին պետք է լինի. անշուշտ, արժե, որ մենք և հատկապես՝ եկեղեցու առաջնորդող եղբայրները, դիտարկենք նրա օրինակը, որպեսզի դարաշրջանը փոխելու համար լինենք Աստծուն ձեռք բերելու և մեզնից դեպի ուրիշները Աստծուն հոսեցնելու նմուշօրինակ՝ Նեմ 5:19, 13:14:

© 2022 Living Stream Ministry